Արձանագրություն N 3

ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-17/54 ծածկագրով Գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան **08.12.2017թ.**

ժ. 11:00

Մասնակցում էին.
Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Սողոմոնյան
Հանձնաժողովի անդամներ՝ Կ. Սիմոնյան
Գ. Մոմջյան
Ա. Ավայյան
Ա. Ավետիսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Կարապետյան

1. Գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի որակավորման պահանջներին մասնակիցների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի գնահատելու մասին

(Ա.Սողոմոնյան)

Ընդունել ի գիտություն, որ

1.1 «ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված" Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի 43-րդ կետի 3-րդ մասով նախատեսված հարցման մասին 1-ին տեղ զբաղեցնող մասնակիցներ «ՍԱՍՈՒՆԱՍԱՐ», «Վահրադյան Շին» և «Վանյան և Հովսեփյան» ՍՊԸ-ների՝ վերաբերյալ Ֆինանսների նախարարության կողմից տրամադրվել է դրական եզրակացություն:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

1.2 Ընթացակարգի 1, 2, և 3–րդ չափաբաժինների մասով «ՍԱՍՈՒՆԱՍԱՐ», «Վահրադյան Շին» և «Վանյան և Հովսեփյան» ՍՊԸ-ներին ոչ ավտոմատ եղանակով ծանուցում էր ուղարկվել առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

1.3 Սահմանված ժամկետում մասնակիցների կողմից ստացվել են որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

1.4 «ՍԱՍՈՒՆԱՍԱՐ», «Վահրադյան Շին» և «Վանյան և Հովսեփյան» ՍՊԸ-ների կողմից ներկայացված «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը գնահատվում է բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

1.5 «ՍԱՍՈՒՆԱՍԱՐ», «Վահրադյան Շին» և «Վանյան և Հովսեփյան» ՍՊԸ-ների կողմից ներկայացված «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշը գնահատվում է բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

1.6 «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշը գնահատվում է բավարար:

. **Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:**

1.7 «ՍԱՍՈՒՆԱՍԱՐ» ՍՊԸ-ի որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի գծով առկա էր անհամապատասխանություն, մասնավորապես մասնակցի կողմից առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետ՝ ճարտարագետ-շինարարի և որմնադիր վարպետի հրավերով սահմանված պատմության և մշակույթի հուշարձանի վերականգնման նվազագույն մասնագիտական փորձը չափանիշը հիմնավորող փաստաթղթերը առկա չեն: Մասնակցի կողմից առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետ՝ հնագետը հանդիսանում է ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի աշխատակից, ինչը բացառում է վերջինիս մասնակցությունը տվյալ աշխատանքներին :

. **Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:**

1.8 «Վանյան և Հովսեփյան» ՍՊԸ-ի որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի գծով առկա էր անհամապատասխանություն, մասնավորապես մասնակցի կողմից առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետներ՝ ճարտարապետի, ճարտարագետ-շինարարի և որմնադիր վարպետի հրավերով սահմանված պատմության և մշակույթի հուշարձանի վերականգնման նվազագույն մասնագիտական փորձը չափանիշը հիմնավորող փաստաթղթերը առկա չեն:

. **Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:**

Հանձնաժողովը որոշեց

1.9 Մասնակիցներ՝ «ՍԱՍՈՒՆԱՍԱՐ» և «Վանյան և Հովսեփյան» ՍՊԸ-ներին առաջարկել մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

1.10 Կասեցնել նիստը մինչև «ՍԱՍՈՒՆԱՍԱՐ» և «Վանյան և Հովսեփյան» ՍՊԸ-ների կողմից որակավորման պահանջներին մասնակիցների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի անհամապատասխանությունների շտկումը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի Նախագահ՝		Ա. Սողոմոնյան
Անդամներ՝		Կ. Սիմոնյան
		Ա. Ավալյան
		Ա. Ավետիսյան
		Գ. Մոմջյան
Քարտուղար՝		Ն. Կարապետյան